

## Գ Ր Ա Ւ Ո Ս Ա Կ Ա Ն

### «ԲՈՒՅՍԵՐԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱ»

Քարգմանություն проф. Л. И. Курсанов-ի և проф. М. И. Голенкин-ի խմբադրությամբ Մանկավարժական ԲՈՒՅ-երի համար կազմած „Курс ботаники“ ձեռնարկի երրորդ մասի: Խմբագրությամբ պրոֆ. Ն. Բեդեյանի: Պետհրատ, Երևան, 1938 թ.:

Այս գրքի պատմությունը նույնպես կապված է ՀՍՍՌ Պետհամալսարանի հետ: Վերջինիս նախաձեռնությամբ է թարգմանվել և տպագրվել՝ հեշտացնելով մեր ԲՈՒՅ-երի ուսանողների գործը:

«Բույսերի մորֆոլոգիա և էկոլոգիա» գրքի համեմատությամբ սա շատ ավելի խնամքով է կառարված. կան մի քանի թերություններ, որոնք այնքան էլ աչքի չեն ընկնում և, հավանաբար, պատահականության արդյունք են:

Այստեղ էլ մենք տեսնում ենք տերմինների և բույսերի անունների մեջ որոշ թերություններ: Օրինակ՝ այստեղ род հասկացողության համար տեղ-տեղ գործ են ածվում «սեռ» և տեղ-տեղ (ավելի շատ)՝ «ցեղ» ըստերը: Կան նաև մի քանի այլ շփոթություններ:

Մասամբ վերցված են բույսերի ժողովրդական գործածական անունները և մեծ չափով՝ Ալիշանի «Հայ բուսակիրց» և Մենեիշյանի «Բուսաբանությունը»: Զրացասելով բույսերի հայերեն անվանացուցակը հարստացրնելու այս վերջին ուղին, մենք այնուամենայնիվ նախապատվությունը տալիս ենք ժողովրդական անուններին և, եթե այդպիսիները չկան, ապա լատինական անուններին՝ հայերեն տառադարձությամբ և միայն որոշ դեպքերում կարելի է օգտագործել գրականության մեջ եղած անունները, որոնց ստվար մասը, իդեպ առած, ստեղծված է կարինետներում, լատինական կամ հունական անունների բառացի թարգմանությամբ և հաճախ բանհնչուն չէ:

Այստեղ ևս մենք հանդիպում ենք «բույսի մոտ» արտահայտությամբ, սակայն ավելի սակավ դեպքերում: Գործ է ածվում «բույսն ապրում է այս կամ այն երկրում» խորթ դարձվածքը:

Խմբագիրն ամենայն իրավամբ հարկ է համարել (ինչպես զրա մասին ստում է առաջաբանում) ծանոթությունների ձևով տվյալներ բերել մեր ուսուցողներից: Կամ հարևան երկրներում աճող բույսերի մասին: Տվյալները բերված են այն էջերի վրա, որտեղ տեքստի մեջ խոսվում է այդ բույսերի կամ համապատասխան ընտանիքների կամ ցեղերի մասին: Դա, իհարկե, շատ լավ միտք է, սակայն պետք է ասել, որ բերված տվյալները երբեմն ճիշտ չեն: Օրինակ՝ Crataegus-ի մասին գրված է, որ աճում է Վրաստանում

(էջ 337): Պետք է ասել, որ այդ բույսը սզնին կամալոնն է և շատ տարածված է նաև Հայաստանում: *Vaccinium uliginosum*-ը կա նաև Հայաստանում (էջ 356): 368-րդ էջում կարելի էր ավելացնել, որ մեզ մոտ աճում է *Solanum dulcamara*-ին նման և նրան փոխարինող *S. persicum*-ը: 374-րդ էջում թվարկվում է, թե Հայաստանում *Rubiaceae* ընտանիքից ինչ ցեղեր կան: Նկարագրությունից երևում է, որ միայն երեք ցեղ կա, մինչդեռ փաստորեն հինգ ցեղ կա: Նույնը կարելի է ասել նաև 377-րդ էջում բերված տվյալի մասին. *Dipsacaceae* ընտանիքից հիշվածներից Հայաստանում աճում են նաև *Cephalaria* և *Scabiosa* ցեղերի շատ տեսակներ: Բացի դրանից, այդ ծանոթությունների մեջ խառը բերվում են տեղական վայրի բույսերը, դրսից բերված բույսերը և կուլտուրական բույսերը, առանց նշելու դրա մասին: Սմբազրի այս ծանոթությունները պակասավոր են, հանգամանորեն չեն կազմված և հաճախ այնպես են շարադրված, որ սխալ պատկերացման տեղիք են տալիս:

Ա. Արաքատյան